

հանճան անուն, որ ի բազմաց հետէ վաճառական էր եւ բնակէր յԱրզուում, եւ երկրորդն քեռորդի նորա Գրիգոր էփրիկեան վաւերական թղթովք զօրավարին մերոյ առ հրամանատար տեղոյն եւ ընծայական թղթովք ի մէնջ առ ժողովուրդ քաղաքին: Ուղտոյ եղեալ զնոսա բուն հարաք ուղտոյ դնել եւ զժողովուրդն:

Կարգաւորագոյն քան զմերն էր պատրաստութիւն յունաց, զի գաղթական կիւմիշխանացի եօթանասուն տուն եկեալ յԱրզուում յարշաւանս Բասքեիշի անդ ի նմին ատուրս անցին եւ Վրաստան, եւ զլիաւորի նոցա Թօտօրի անուն յանձն եղեւ պատրաստել տեղի բնակութեան ողջոյն յոյն գաղթականին: Նա ի Վրաստանէ եւ յԱրզուում վաճառական ոմն այլ զօսն անուն Եանի, եւ ընդ նմին աւագ քահանայ նոցա, երկոքին եւս մտերիմ ծանօթք ինձ կալան զգործ գլխատրութեանն, եւ համօրէն ժողովուրդ նոցա սրտի մտօք ունկնդիր լինէին որ զինչ միանգամ ընտրէին եւ հրամայէին նոքա:

Յետ այսր ամենայնի ի հասարակածէ ամսեան մայիսի սկիզբն արարեալ ժողովրդեան քակտիլ ի կայից իւրեանց մինչեւ զհինգ յունիսի դատարկեցաւ ողջ Արզուում քաղաք եւ շրջակայ դաշտն Կարնոյ եւ Գերջան եւ Թորղում, որք կանուխ յանձնեալ էին Օսմանցոյն. Բասեն, Խնուս, Գէքման, գունդ կազմեալ ազատադէմ եւ համարձակ գնային զճանապարհ իւրեանց: Եւ ըստ ատուր ատուր ի ճանապարհ ելանելոյ ամբոխին հրամայէր վասն նոցա Բանգրատիէ օֆֆիշեալ զոմն հանդերձ ընդ իւր զինուորօք, զի խաղաղ եւ աներկիւղ հասուցեն զաւուրն շու ի կետադրեալն: Վասն այնորիկ հարկ լինէր յապաղել իրացն, զի պարտք էին հաւաքել զգաղթեալն յայլ եւ յայլ տեղեաց, եւ համար առնել տանցն ի ճանապարհ անկելոց, եւ զցուցակն հասուցանել առ զօրավարն, զի օրինաւոր զիր հրամանի արասցէ վասն ամենեցուն նոցա միանգամայն: Նաեւ ինքն իսկ Բանգրատիէ ոչ զանց առնէր անձամբ ելանել երբեմն տեսանել արտաքոյ քաղաքին զաւուր զուեալն, սրտապնդէր զնոսա արիանալ խուն մի նեղութեան ճանապարհին յուսով ապագայ հանգրատեան:

Յառաջին ատուրսն ի ճանապարհ անկանելոյ ամբոխին զօրավարն ստիպեաց զԱռաջնորդն, զի մեկնեցի փութով ի քաղաքէն, որպէսզի մի դանդաղեցի ժողովուրդն. եւ նա ըստ հրամանին ատուրս սակաւ դագարեալ ի վանսրն Հասանդալայի, ի 3 յունիսի եւ անտի գնալ ի Կարս. եւ ի հաւաքել ժողովրդեան անդր ել եւ անտի դիմել յԱխալխա: Իսկ մերակողմանց փոխանորդ մեծաւորն հ[այր] Նիկողայոս<sup>11</sup> մնաց մինչեւ ցօրն յետին ելանել ընդ տանուտեառն առ որում բնակէր. եւ ինձ հարկ է վերայ կայր զեզերել անդէն վասն գործոյ ժողովրդեան, զի այն ատուրք ոչ եւս հանգստեան եւ նստելոյ ատուրք էին, այլ պարտ էր յածել անդադար առ ամենեսին, զհոգեւոր պէտսն հոգալ, եւ զժանրաշարժան փութացուցանել, զի մի օր ի յօր դանդաղեցին. ոմանց փասափօսք խնդրել, կիսոց զպարտս եւ զպահանջս դիրել ի հատուցումն, եւ որ այլ եւս անբաւ գործ վասն զեղջէից եւ քաղաքացուց. ուրեք եւ վասն այլափառաց բարեկամաց. եւ այն զի ամենայն քահանայք մեր որ ի քաղաքին էին, ի Խորթրոյ էին, թողին նոքա եւ մեկնեցան ի գաւառ իւրեանց: Ի հոգեւորս միայն հ[այր] Նիկողայոսի օժանդակութիւն կայր ինձ մօտ, այլն ամենայն յիմ թիկունս ծանրաբեռնեալ էր, մինչեւ զգիշերս ողջ ի գլուխ հանել զրելով համարս եւ ցուցակս ժողովրդեան ըստ ամենայն հարցմանց եւ հրամանաց եղելոց մերթ ի Բանգրատիէ եւ մերթ յատենէն Թիֆլիզու: Գոհութիւն աստուծոյ, զի վարժութիւն մեր առ եւրոպական հրահանգս եւ կարգաւորութիւնս դիւրացուցանէր փութանակի կատարել զհրամանս ըստ նոցայն ախորժակաց, առ ծանրաշարժութեամբ հայոց, որք չէին ընտել այսպիսեաց, եւ զգովութիւնս ի զլուխ տանէաք, մինչեւ յաւուր միում յատենի

<sup>11</sup> Հայր Նիկողոս Մովսիսյան—Մխիթարյան Միաբանութան անդամ, Կարմիրքցի, վախճանվել է 1839 թ. սեպտեմբերի 29-ին Ախալխալում: